ՀԱՄԵՐԳՆԵՐԻ, ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԻՀ-01

Գործողությունը՝

Սկիզբ՝ 01 հունվար 2018թ.

Ավարտ՝ 31 դեկտեմբեր 2018 թ.

ք. Երևան

«23» Հունվար 2018թ.

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ «Նվիրատու»), որի անունից վարչության կանոնադրության հիման վրա գործում է վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյանը, մի կողմից և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Վ. Ասատրյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանգրով, ՀՀ կողմից 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 05 դասի «14.Համերգների, փառատոնների և այլ միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ «Միջոցառումներ») Նվիրատուն սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է 152.317.700 (մեկ հարյուր հիսուներկու միլիոն երեք հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) գումարի չափով դրամաշնորհ՝ սույն պայմանագրի N 4 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում:

1.2. Միջոցառումներն իրականացվելու են սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագրի» և N 2 հավելված՝ «Միջոցառումների իրականացման ժամանակացույցի» պահանջներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Նվիրատուն իրավունք ունի.

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Միջոցառումների իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը:

2.1.2. Առանց առանձին Միջոցառումների դիմաց վճարելու միակողմանի լուծել սույն պայամանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե

- այդ Միջոցառումները Նվիրառուի կողմից իրականացվում են առանց սույն պայամանգրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագրով» սահմանված պահանջների պահպանման և ողջամիտ ժամկետում, դրանց վերստին պատշաճ իրականացումն անհնար է,
- Նվիրառուն խախտել է այդ Միջոցառումների իրականացման սույն պայմանագրի N 2 հավելված՝ «Միջոցառումների իրականացման ժամանակացույցով» սահմանված ժամկետները, և այդ Միջոցառումների արդյունքները ողջամիտ ժամկետում Նվիրառուի ընդունմանը վերստին ներկայացնելն անհնար է:

2.1.3. Չընդունել առանձին Միջոցառումների արդյունքները՝ սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագրով» կամ այդ Միջոցառումների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին դրանք չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և Նվիրառուից պահանջելով վճարել սույն պայմանագրի 4.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.2. Նվիրատուն պարտավոր է.

2.2.1. Ընդունել սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագրի» պահանջներին համապատասխան իրականացված Միջոցառումների արդյունքները՝ համաձայն Նվիրառուի կողմից ներկայացված միջոցառումների արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N3), իսկ դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Նվիրառուին:

2.2.2. Միջոցառումների արդյունքներն ընդունելու դեպքում Նվիրառուին վճարել սույն պայմանագրով սահմանված գումարները:

2.3. Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1. Մինչև Միջոցառումների արդյունքները Նվիրատուին ներկայացնելը, Նվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում, Նվիրատուից պահանջել վճարել իրականացված Միջոցառումների արժեքը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2-րդ կետով նախատեսված դեպքի:

2.3.2. Մինչև Միջոցառումների արդյունքը Նվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանգրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրատուին և հատուցելով հրաժարման արդյունքում նրան պատճառված վնասները:

2.4. Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1. Ապահովել Միջոցառումների արդյունքների համապատասխանությունը սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագրի» և ՀՀ օրենսդրության պահանջներին,

2.4.2. Իրականացնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, իսկ հաշվետու տարվա արդյունքներով պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով չօգտագործված ֆինանսական միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե,

2.4.4. Կատարել Վարչության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.5. Սահմանված կարգով Վարչություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուն Նվիրատուին է ներկայացնում այդ ամսվա ընթացքում իրականացված Միջոցառումների իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը, որի ձևը կցված է սույն պայմանագրին՝ որպես N 3 Հավելված:

3.2 Նվիրատուն հանձնման-ընդունման արձանագրության օրինակները ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում կամ ստորագրում ու կնքում է դրանք և մեկ օրինակը վերադարձնում է Նվիրառուին, կամ նրան է ներկայացնում Միջոցառումները չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում:

3.3 Սույն պայմանագրի 3.2. կետում սահմանված ժամկետում Նվիրատուի կողմից պատճառաբանված գրավոր մերժումը Նվիրառուին չներկայացնելու դեպքում Միջոցառումների արդյունքները համարվում են ընդունված, անկախ դրանց հանձնման-ընդունման արձանագրության Նվիրատուի կողմից ստորագրման և կնքման պարագայից:

3.4 Իրականացված միջոցառումների վերջնահաշվարկը իրականացվում է ըստ եռամսյակային տվյալների (համաձայն հավելված 5-ի՝ «Նախահաշիվ»):

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Նվիրառուն պատասխանատվություն է կրում սույն պայմանագրի N 1 հավելված «Տեխնիկական բնութագրով» նախատեսված պահանջների պահպանման համար:

4.2 Որևէ Միջոցառման արդյունքները Նվիրատուի կողմից սույն պայմաագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով չընդունելու յուրաքանչյուր դեպքում Նվիրառուից գանձվում է տուգանք՝ այդ Միջոցառման դիմաց վճարման ենթակա գումարի 1%-ի չափով:

4.3 Որևէ Միջոցառման, N 2 հավելվածով սահմանված, իրականացման ժամկետը խախտելու դեպքում Նվիրառուից գանձվում է տուգանք՝ այդ Միջոցառման դիմաց վճարման ենթակա գումարի 0.05%-ի չափով:

4.4 Սույն պայմանագրի 4.2. և 4.3 կետերով նախատեսված տուգանքները հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառումների իրականացման արդյունքում Նվիրառուին վճարման ենթակա գումարներից:

4.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6 Տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում սույն պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունների լրիվ ծավալով կատարելուց:

5. Մոնիթորինգը

5.1. Նվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

5.2. Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Նվիրառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

5.4. Նվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

5.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Նվիրառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով սահմանված իրենց պարտավորություններն ամբողջությամբ, մասնակիորեն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է այնպիսի անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,

քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը անընդմեջ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրման պահից և գործում մինչև 2018 թ. դեկտեմբերի 31-ը, իսկ պայմանագրի դրույթները տարածվում են նաև մինչև դրա կնքման պահն ընկած ժամանակահատվածի վրա՝ սկսած 2018 թ. հունվարի 01-ից:

7.2. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր (ստորագրված ու կնքված) երկկողմ համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի գրավոր (ստորագրված ու կնքված) երկկողմ համաձայնություններով:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայմանագիրը բաղկացած է 6 էջից և 6 էջ հավելվածներից, կազմված է երկու հավասարազոր օրինակներից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրատու՝	***Նվիրառու՝***
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4	Հասցեն՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
ՀՎՀՀ՝ 02528489 Հ/Հ 900011011690	ՀՎՀՀ 00144572, Հ/Հ 1570022467400100
Երևանի թիվ 1 Գանձապետական բաժանմունքում	«Ամերիաբանկ» ՓԲԸ-ում
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
_____ Վ. Հարությունյան	_____ Վ. Ասատրյան

Հավելված N 1

«Համերգների, փառատոնների,
միջոցառումների կազմակերպման և
համալիրի պահպանման աշխատանքների
իրականացման դրամաշնորհի»
2018թ. հունվարի 23-ի
N ՀՀՇ-07 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Մշակույթի, սպորտի (մարզական) սոցիալական, կրթական (նպատակ ունենալով աջակցելու՝ հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով անձի դաստիրակության գործընթացին) և այլ ոլորտներին առընչվող հանրային տարաբնույթ միջոցառումների նախաձեռնում և իրականացում և կամ պետական և/կամ այլ մարմինների կողմից նմանատիպ միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով Նվիրառուի կողմից աջակցության և տարածքի տրամադրում:
2. Հանրապետական նշանակության հուշարձան (ՀՀ կառավարության 07.10.2004 թ. թիվ 1616-Ն որոշում) «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» կառույցի անհրաժեշտ և անընդհատ պահպանությունը և հուշարձանի հանրահռչակմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:
3. Համերգների, փառատոնների, միջոցառումների կազմակերպման աշխատանքները իրականացվում են «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրանից բխող օրենսդրական ակտերի դրույթներին համապատասխան:

Նվիրատու՝

_____ Վ. Հարությունյան

Նվիրառու՝

_____ Վ. Ասատրյան

Հավելված N 2
«Համերգների, փառատոնների,
միջոցառումների կազմակերպման և
համալիրի պահպանման յաշխատանքների
իրականացման դրամաշնորհի»
2018 թ. հունվարի 23-ի
N ՀԴՀ-01 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման ժամկետը				
		I եռ.	II եռ.	III եռ.	IVեռ.	2018թ.
1	Համերգների, փառատոնների և այլ միջոցառումների իրականացում (պետպատվերի առկայության դեպքում)	-	3	6	10	10
2	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի պահպանում	1	1	1	1	1

Նվիրատու՝

_____ Վ. Հարությունյան

Նվիրառու՝

_____ Վ. Ասատրյան

Հավելված N 3

Հավելված N 3

«Համերգների, փառատոնների,
միջոցառումների կազմակերպման և
համալիրի պահպանման աշխատանքների
իրականացման դրամաշնորհի»
2018 թ. հունվարի 23-ի
N ՄԿՀ-01 պայմանագրի

Նվիրատու՝
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
գույքի կառավարման վարչություն
Հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ՝ 02528489 Հ/Հ 900011011690
թիվ 1 Գանձապետական բաժանմունքում

Նվիրառու՝
«Կարեն Դեմիրճյանի անվան
մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի
զբոսայգի 1,
ՀՎՀՀ 00144572, Հ/Հ 1570022467400100
«Ամերիաբանկ» ՓԲԸ-ում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N
«___» _____ 2018թ.

Պայմանագրի անվանումը՝ «Համերգների, փառատոնների, միջոցատումների կազմակերպման և համալիրի պահպանման աշխատանքների իրականացման դրամաշնորհի» պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ _____.__ .2018թ.
Պայմանագրի համարը՝ _____
Նվիրատուն, ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյանի, և Նվիրառուն, ի դեմս «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Վ. Ասատրյանի, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ ___.___.ի. 2018 թ-ից մինչև ___.___.2018 թ ժամանակահատվածում Նվիրառուն իրականացրել է վերը նշված պայմանագրով նախատեսված՝ ստորև թվարկած Միջոցառումները՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցում նշված ժամկետներում, իսկ դրանց արդյունքները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին.

Միջոցառման համառոտ նկարագիրը	***Միջոցառման քանակական ցուցանիշները***	***Միջոցառումների իրականացման ժամկետը***	***Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)***	***Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)***
Ընդամենը	.....	.....		

Նվիրատու՝
_____ Վ. Հարությունյան

Նվիրառու՝
_____ Վ. Ասատրյան

Հավելված N 4
«Համերգների, փառատոնների,
միջոցառումների կազմակերպման և
համալիրի պահպանման աշխատանքների
իրականացման դրամաշնորհի»
2018 թ. հունվարի 23-ի
N ՏԿԿ-01 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. ՀՀ դրամ/

N	Միջոցառման անվանումը	Նվիրառուին վճարման ենթակա գումարները				
		I եռ.	II եռ.	III եռ.	IVեռ.	2018թ.
1	Համերգների, փառատոնների և այլ միջոցառումների իրականացում և Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի պահպանում	35592.0	68431.0	101460.4	152.317.7	152.317.7

Նվիրատու՝

Վ. Հարությունյան

Նվիրառու՝

Գ. Սաատրյան

Հաստատված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պետական գույքի կառավարման վարչության պետ՝ Ա. Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N5
«23» հունվարի 2018 թ
կնքված N ՊԳ-01 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

<<Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր>> պետական ոչ առևտրային կազմակերպության եկամուտների և ծախսերի

01-հունվար- 31 դեկտեմբեր 2018թ.

Դասակարգիչներ	Հ/Հ	Հոդված	1-ին եռամսյակ		1-ին կիսամյակ		9 ամիս		Տարեկան	
			ԸՆԴԱՄԵՆԸ	այդ թվում պետական բյուջեից	Ընդամենը	այդ թվում պետական բյուջեից	Ընդամենը	այդ թվում պետական բյուջեից	ԸՆԴԱՄԵՆԸ	այդ թվում պետական բյուջեից
	1	2	9	10	3	4	6	7	9	10
	1	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	**35592.0**	**35592.0**	**68431.0**	**68431.0**	**101460.4**	**101460.4**	**152317.7**	**152317.7**
		այդ թվում								
	1.1	**ՀՀ պետական բյուջեից**	35592.0	35592.0	68431.0	68431.0	101460.4	101460.4	152317.7	152317.7
		Այդ թվում ԱԱՀ	5932.0	5932.0	11405.2	11405.2	16910.0	16910.0	25386.3	25386.3
	2	**ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ**	**35592.0**	**35592.0**	**68431.0**	**68431.0**	**101460.4**	**101460.4**	**152317.7**	**152317.7**
		այդ թվում								
	2.1	**Աշխատանքի վարձատրություն**	**14504.0**	**14504.0**	**36260.0**	**36260.0**	**58016.0**	**58016.0**	**87024.0**	**87024.0**
		այդ թվում								
411100		Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		14504.0		36260.0		58016.0	87024.0	87024.0

		Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ-ընդամենը	**21088.0**	**21088.0**	**32171.0**	**32171.0**	**43444.4**	**43444.4**	**65293.7**	**65293.7**
		այդ թվում								
421200		Էներգետիկ ծառայություններ	20509.0	20509.0	30692.0	30692.0	40392.0	40392.0	61000.0	61000.0
		այդ թվում								
		Էլեկտրաէներգիա	16000.0	16000.0	25083.0	25083.0	34783.0	34783.0	51000.0	51000.0
		Ջեռուցում	4509.0	4509.0	5609.0	5609.0	5609.0	5609.0	10000.0	10000.0
421311		Կոմունալ ծառայությունները /ջրամատակարարում, ջրահեռացում/	240.0	240.0	560.0	560.0	869.4	869.4	1200.0	1200.0
421400		Կապի ծառայություններ	220.0	220.0	440.0	440.0	660.0	660.0	890.0	890.0
421391		տարածքի ոռոգման ծախսեր	0.0		240.0	240.0	600.0	600.0	600.0	600.0
423900		Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	27.0	27.0	54.0	54.0	81.0	81.0	108.0	108.0
426700		Կենցաղային և հանրային սննդի նյութեր	0.0		0.0		564.0	564.0	1127.1	1127.1
421323		Աղբահանություն	92.0	92.0	185.0	185.0	278.0	278.0	368.6	368.6

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

(ստորագրություն) Է.Ասատրյան
(անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն) Ա.Աբրահամյան
(անուն, ազգանուն)